թիւններին, իբրև մի ապարդիւն գործին, և պալլադիոնը ընդարձակում էր ընդամենը 300,000 քառակուսի։ Պէտք է նկատել, որ ընդարձակական փառք նշանակը միակ չէր, որ նպաստում էր գործերի փառաւորութեանը Իտալիայի մէջ։ Իտալական միջնադարեանների փառաւորութիւնը և ծանր հարկերը ճնշում էին ազգաբնակութեանը, իսկ պետութեանը միջոց չէին տալիս բաւականութիւն տալ անհատահաճոյ պահանջներին։ Ցասն և չորս խաղաղ տարիներ հարկաւորեցան, որ Իտալիան կարողանար ծածկել իր տարեկան ծախսերի պակասորդները, փոխանցել թղթադրամը շրջաբերութիւնից և վերանորոգել հարկատուութեան նշանակը։ Վերջապէս դրամն էլ յայտնի լինելն որ և է հասարակական հիմնարկութեան պահպանութիւնները, ժամանակ և փորձ է հարկաւոր նրանց լրացնելու և հասարակութեան գիտակցութիւնը զարթեցնելու համար։ Այդ ֆաղից մամուլի և հրապարակախօսութեան հասարակ ազատութիւնը, որ իտալացու ոգին և մարմին է կազմում, մեծ ծառայութիւն մատուցին պետութեանը, ցոյց տալով չարիքի բուն պատճառները և համոզատար կերպ ժամանակակիցների մէջ պատրաստելով հասարակութիւնը այնպիսի մի վերանորոգութեան համար, որ շատերին չափազանց վտանգաւոր էր թւում, որովհետև նրանից կարող էր սպառ քաղել հաջողականութիւնը, որ դեռ և մեծ ազդեցութիւն ունի գիւղական հասարակութեան վրա, և վնասել Իտալիայի միութեանը, որ իւրաքանչիւր իտալացու համար իր կեանքից թանգ արժէ և որին նա պատրաստ է զոհել իր անձնական համոզմունքները, ինչպէս զոհում էին Մաձինի և Գարիբալդին։ Իւրեա ազատութիւնը Իտալիայի մէջ պատրաստեց հասարակութեանը ընդարձակ վերանորոգութիւնը ընդունելու համար։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լայպցիգում սօցիալիստների դէմ հալածանքները նորից սաստկացել են։ Դրեզդէնի պօլիցիան յայտնել է, որ բոլոր այն նամակները, որոնք ուղղված կը լինեն այնտեղ աքսոր 20 նշանաւոր սօցիալիստներին, բոլորն էլ պոլիցիայում կը բացվեն։ Մէկլէնբուրգի գաւառներում (տեղապահ դրդում), խուզարկութիւն է կատարել ոստիկանութիւնը, խնդրելով որ այդ բաժնի զինուորների մէջ տարածված են եղել սօցիալիստական թերթերը։

—Աթէնքից հեռագրում են որ Յունաստանի և Թիւրքիայի մէջ պատերազմի կարելութիւնը օրէց օր աւելի հաւանականութիւն է ստանում։

—«Մեղու Հայաստանի» լրագրին հաղորդում են, որ Թիւրքաց կառավարութիւնը աչքի առջև ունելով Յունաստանի հետ պատերազմը, հրամայել է ամեն տեսակ զէնքեր խլել Վասպուրականի հայերից և ընդհակառակն զինաւորել Հայաստանի քիւրդերին, քանի որ Թիւրք կանոնաւոր զօրքերը պէտք է յետ կանչվեն Թիւրքաց Հայաստանից։

—«Порядокъ» լրագրին գրում են Կ. Պոլսից, որ Թիւրքաց քիւրդերը նոր արշաւանքի են պատրաստվում Պարսկաստանի դէմ։ Այդ պատերազմը լինելու է գարնան սկզբին։

—Այս օրերս Բեռլինում կայացած ազատամիտ կուսակցութեան մի ժողով, որտեղ ատենաբաններից գլխաւորը պրոֆեսոր Վիրխովն էր, փակվեցաւ ոստիկանութեան հրամանով, որովհետև ժողովին ներկայ գտնված հակասեմիտականները սկսեցին մեծ անկարգութիւններ անել նիստի ժամանակ։

—Բեռլինից հեռագրում են «Köln Zeitg» լրագրին, որ Միւնխէնի յոյն ուսանողները հրաման են ստացել իրանց կառավարութիւնից անմիջապէս վերադառնալ հայրենիք, զօրքի մէջ մտնելու համար։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կին-փաստաբաններ.—Կալիֆորնիայում, և շատ կարելի է մինչև անգամ Միացեալ-Նահանգներում առաջին անգամ վէճերի գործում երկու պաշտպաններ հանդէս դուրս եկան երկու կանայք, այն է՝ Լաուրա Գորդոն և Կլարա Ֆոլց։ Կալիֆորնիայի բարձրագոյն դատարանում նորերումս թոյլ տուեցին կնկեր անունով առաջին կանայք դատաստանական պաշտպանի անուանը և գործեր պաշտպանելու։

⁂

Ռոսինիի մարգարէութիւնը.—1868 թւին, մահուանից մի քանի ամիս առաջ, մաէստրօն Պատտիին այցելութիւն գնաց, որի շուտով լինելու պսակը յայտնի էր ամբողջ հասարակութեանը։—«Ճի՞շդ է»,—հարցրեց Ռոսինին անմիջապէս,—որ դու մարկիզի հետ ես պսակվում։—«Այո, մաէստրօ»,—պատասխանեց երգչուհին։—«Աղջիկս, դու մեծ յիմարութիւն ես անում. քեզ նման կինը կարող է միայն կամ թագաւորի կինը լինել կամ երգչի»։

⁂

Անգլիացի բարեկամ Բօտչէլլի մասին.—Ֆլորենցիայի անհայտ գրողներից մէկը, որը մէկ տարի առաջ Անգլիայի համար սարքագրութիւն էր բացել, նոյն այդ նպատակով բարեկամ Բօտչէլլի մօտ փորձում։ Հէնց որ նա յայտնեց իր գալու նպատակը, բարեկամը առաւ նրան իւր նօտաչեկանները։ Յետոյ նա խօսք բացեց արվեստի մասին։ Այնու ամենայնիւ, հէնց մի քիչ նուագեց յետոյ, փոխեցաւ և յայտնեց, որ ցաւում է, որ չէ կարող երկար նուագել և ստիպված է մեկնել, բանի առել ամենատերևի տանտիկնոջը, որովհետև պարտաւորված է 10.000 ֆրանկ ներկայացնել, այն ինչ ինքը գրպանում բոլորը միայն 800 ֆրանկ ունի։—«Թող խեղճերը չը պէտք է գտաղքացնեն մեզ»,—պատասխանեց տանտիկինը, և ճամբուղով սկզբին, հանեց ուղիղ 9.200 ֆրանկ, և տուեց հիւրին։

⁂

Հնագիտական գիւտ.—Գ. Րասամ, որը պարապում է Նինուէի և Բաբելոնի հետազօտութեամբ Բրիտանական Թանգարանի համար, Բաղդադի մօտերքում, Նար-Մալքայի հին ջրանցքում, գտաւ մինչև այժմ դեռ անյայտ քաղաքների մէջ քաղաք։ Athenaeum-ի խօսքերով, Րասամ հանեց արդէն այնտեղից մեծ քանակութիւն յիշատակարանների, որոնք վերաբերում են բաբելացիների կուլտուրական կեանքին։

⁂

Գերմանական մամուլի մասին.—«Բոհեմիա» լրագրի հրատարակիչ՝ Ֆրանց Կլիւչակ, յայտնում է իր լրագրում, որ ինքը, ծերութեան պատճառով այլ ևս չէ կարող լրագրի հրատարակիչը լինել։ Խմբագիր Վալտեր աւելացնում է որ Կլիւչակ ամեն ջանք գործ էր դնում 45 տարվայ ընթացքում աջնուարար առնելու լրագրի հրատարակութեան գործը։ Կլիւչակ ծնունդով է, այդ պատճառով նրա մասնակցութիւնը լրագրի մէջ գործնական էր։ Խմբագիր Վալտեր սոր 33 տարի է արդէն, որ նոյնպէս աշխատում է։ Նրանք միացած ունեցել այնպիսի զարգացել լրագիր Աւստրիայի գաւառական լրագիրների մէջ ամենալաւերից մէկը. այդ լրագիրը անուն ստացաւ և մեծ ազդեցութիւն ունէր։

⁂

«Monatschrift für Orient» լրագիրը տալիս է, որ 20—30 տարի առաջից առաջ Չինաստանի լրագիրներում յայտարարութիւններ հրատարակելը բոլորովին անծանօթ բան էր։ Միայն փողոցի անկիւնի պատերի վրա պատահում էին երբեմն յայտարարութիւններ կպցրած. այն ժամանակվայ լրագրութիւնը խիստ կաշկանդված էր մի քանի թերթերից, որոնք ծախվում էին փողոցներում, պարունակելով իրանց մէջ բաղդի մի քանի նշանաւոր անցքեր։ Այժմեան լրագիրներից միայն մինի ցոյութիւնը պարտական է անգլիացի նախձեռնողին, դա մի պաշտօնական թերթ է և ունի նմանութիւն չունի եւրոպական լրագիրների հետ. թէպէտ այս ուղղութեան լրագիրներն էլ սկսում են համակրութիւն վայելել անգլիացիներից։ «Շէն-Պաօ» ամենօրեայ թերթը, որի հիմնադիրն է Լոնդոնցի Մէյջօր և որը արտայայտիչ է առաջադէմ եւրոպացիների կուսակցութեան, ունի այժմ առօ հազար չինացի ստորագրող։ Այդ կուսակցութեան հակառակ մի քանի տարի առաջից առաջ հիմնվեցաւ մի ուրիշ թերթ «Սին-Պաօ» հակառակ եւրոպական կուսակցութեան ուղղութեան։ Դա էլ շատ կարդացողներ ունի։ Անցած թերթերը այնքան յայտնի ու կարդացված չեն։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 մարտի։ Այսօր ժամի հինգին դատավճիռը յայտնված է վերջնական ձևով։ Վճռաբեկ գանգատի ժամանակամիջոցը մի օրական է և վերջանում է էգուց երեկոյեան 5 ժամին։ Բոլոր դատապարտվածները բացի Միխայլովից դատավճռի պատճէններ պահանջեցին և յանձնեցին իրանց պաշտպաններին գանգատ ներկայացնելու։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 մարտի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 87 կ., երկրորդ 93 ր. 37 կ., երրորդ 94 ր. 37 կ., չորրորդ 93 ր. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 224 ր. 25 կ., երկրորդ 217ր., 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ր. 50 կ., երկրորդ 92 ր. 50 կ., երրորդ 92 ր. 50 կ., ոսկի 7 ր. 95 կ.: Ռուսաց 1 րուբլ Լոնդոնի վրա արժէ 24,71 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 211 մարկ, Փարիզի վրա 261 ֆրանկ 25 սանտիմ։ Բորսայի տրամադրութիւնը հանգիստ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

դէմ.—Թող այդ լինի։ Մեռցիր քո հօր տանը։ Պատերազմական գործը ունի իր այլ և այլ խորամանկութիւնները։ Դու բոլորովին կը փչացնես իմ կարգադրութիւնները, եթէ ինձ հետ գալու լինես։ Պատճառները կը բացատրեմ քեզ։ Դու գիտես, որ ես հեռանում եմ այստեղից ռուսացի անունով։ Իբրև ռուսին քեզ ինձ հետ տանել չեմ կարող, որովհետև դու դեռ իմ նշանածն ես։ Իսկ եթէ իբրև նշանած տանելու լինեմ, դա մի կողմից անպատշաճ է, միւս կողմից, հայրդ, թէ, թոյլ կը տայի։ Բայց եթէ թողնելու ես լինէին, անպատճառ կը շրջապատեն քեզ մի ամբողջ խումբ կնիկներով, աղախիններով և ծառաներով։ Դրանց մէջ կը բացվի իմ ծածուկ ուղևորութեան գաղտնիքը, որը ես ամենայն զգուշութեամբ պէտք է ծածուկ պահեմ։ Մնում է մի ուրիշ հնար, այն է՝ քեզ փախցնել այստեղից։ Այդ ես կանէի, բոլորովին ուշադրութիւն չը դարձնելով բամբասանքի վրա, որովհետև սէրը աւելի բարձր է քան հասարակութեան նախապաշարմունքը։ Բայց դարձեալ մի այսպիսի փախուստը կը վնասէր գործին։ Ես խոյս կը մերժէի այն պատրաստելը, ինչ առանձին այստեղից դուրս եմ գալիս, խոյս կը սկսէին այստեղից հետամուտ լինել ինձ և լրտեսել իմ գործողութիւնը։ Իմ պլանները այնուհետև բոլորովին կը խանգարվէին։

—Ես այժմ համոզված եմ քեզ հետ, ես այստեղ կը մնամ և կը սպասեմ քո յաջողութեանը… Վերջին խօսքերը այնպիսի մի եղանակով արտասանեց Թամարը, կարծես, նոյն րոպէում նա զգաց անցաւ մի նոր և աւելի զօրեղական միտք։ Բէկը այնինչ չը նկատեց, միայն գրկեց նրան և համբուրեց, ասելով.—Իմ խելօքս, իմ հրեշտակ… Բայց ինչ միտք էր այդ։ Բէկը համոզեց նրան հրաժարվել իր յանկու պահանջից և այդպէս շատ համաձայնվել բէկի հետ։ Թամարը կամքի տէր աղջիկ էր։ Նա հեշտութեամբ կարող էր դուրս գալ… Չգիտէ թէ նա մտածեց. «Թող գնայ իմ սիրելին, ես նրան չեմ խանգարի… ես կը գնամ նրա ետևից այն ժամանակ, երբ նա գործի սկսած կը լինի…» Ինչ էլ որ լինէր նրա խորհուրդը, այդ միայն Աստուած գիտէ, բայց բէկին մեծ ուրախութիւն պատճառեց, որ կարողացաւ վերջապէս համոզել նրան։

—Երբ ես մտադիր ճանապարհ ընկնել, հարցրեց օրիորդը։

—Բոլոր պատրաստութիւնները կարգի դրած եմ, պատասխանեց բէկը.—ինձ մնում էր անհրաժեշտ խնդիրը, այն է՝ ստանալ քո համաձայնութիւնը։ Այժմ ուրախ եմ, որ մենք հաշտուեցանք։ Ես հէնց էգուց երեկոյեան կարող եմ դուրս գալ այստեղից։

—Սիրելի մի աղջիկ, բղաւեց էր օրիորդը։—Բայց ես պատուհանից նկատեցի, դու գրում էիր մի թուղթ, ինչ թուղթ էր այն։ Դու այնքան յուզված էիր գրելու ժամանակ, որ ես կարծում եմ, մի շատ կարևոր բան պիտի լինէր։

—Արդար հետաքրքիր ես դու, Թամար, ամեն բան ուզում ես գիտենալ, ասաց բէկը ժպտալով.—Ես գրում էի իմ կտակը։

—Կտակ… բացականչեց օրիորդը զարմանալով.

—Ինչու համար է կտակը։

—Որ իմանամ քեզ յանձնեմ, որ դու նրա կնիքը լուծես միայն այն ժամանակ, երբ իմ բացակայութեան լուրը քեզ կը բերեն։ Իսկ կարող է պատահել, որ ինձ սպանեն։

—Կարող է պատահել… տխրութեամբ ասաց օրիորդը։—Բայց դու կասես ինձ այդ կտակի բովանդակութիւնը։

—Այժմ ոչ, բայց երբ կը մեռնեմ, բոլորը կարող ես գիտենալ։

—Երևի քո կալուածի, քո հարստութեան մասին է, զարմանալ հետաքրքրութեամբ հարցրեց օրիորդը։

—Աւելի լաւ է չը հարցնես, իմ սէրը միայն իրաւունք կը տայ քեզ բացանել այն ծրարը, որ պիտի յանձնեմ քեզ։

—Այդ միջոցին կատուն, որ ընդունարանում քնած էր, յանկարծ զարթեցաւ, և նկատելով երկուսին փողոցական լոյսը, վազեց բէկի նեղարանը, ասելով.

—Թամար, շուտով փողոցները կը լցվեն մարդիկներով, դու շատ ես ուշանում։

—Լաւ, գրում ասաց, ես այս րոպէիս կը գամ։ ասաց նրան օրիորդը փոքր ինչ բարկացած ձայնով և դարձաւ դէպի բէկը։

—Մենք էլի կը տեսնվենք, այնպէս չէ։

—Անպատճառ, ես առաւօտեան կը գամ մեծ պարտէզի իմ վերջին մնաք բարով առելու, բայց կանչեմ քեզ մօտ։ Միայն այնպէս կարգադրիր, որ քո առանձնացած տեղիդ ոչ ով չը լինի բացի քեզանից։

Օրիորդը վեր կացաւ։ Բէկը բռնեց նրա երկու ձեռքերից և սղմելով նկատեց, որ նրանց վրա արտասուք թափվեցին։

—Այդ ինչ է, հարցրեց նա, աւելի ուշադրութեամբ նայելով օրիորդի կնճռված ձեռքերի վրա։

—Ես այսօր ինձ նախապատրաստեցի արտասու համար, ասաց նա ժպտալով.—պարտէզի ցանկապատից անցնելու ժամանակ ձեռքերս ծակոտեցի։

Երիտասարդը խորին յափշտակութեամբ նրա ձեռքերը սեղմեց իր շրթունքի վրա, ասելով.

—Ես աւելի մեծ հաճութեամբ կը համբուրէի այդ ձեռքերը, եթէ մեր թշնամիների արիւնով ներկված լինէին։

—Այդ էլ կը լինի… պատասխանեց օրիորդը խորհրդաւոր ձայնով և փութացաւ երիտասարդի պարտէզից։ Նրանք երկար չէին բաժանվում միմեանցից, մինչև նախասենեակից կրկին լսվի եղաւ կատուի անախորժ կանչելը. «բաւական է… ուշանում ես, օրիորդ…»

Օրիորդը փաթաթվելով իր շալի մէջ, բէկի տան հետի գանով դուրս եկաւ պարտէզը. բէկը ճանապարհ գրեց նրան մինչև պարտէզի ցանկապատի չարչուան։ *) Երկնիքը բոլորովին ամպամած լինելով, նոր ծագող լուսինը դեռ մթին էր։ Մոխրագոյն մառախուղը պատել էր ամբողջ։ Օրիորդը բաժանվեցաւ իր սիրելիից, կրկին և կրկին սեղմած համբուրելով։

—Կը գամ ինձ մօտ, կը գաս… չուշանաս, սիրելիս…

—Չեմ ուշանայ, իմ հրեշտակ…

—

Նոյն ասոր երեկոյեան պահուն Դաւիթ բէկը թողեց Վրաստանի հին մայրաքաղաք Մցխեթը, և դուրս գալով վրաց Շահնավազ իշխանի ծառայութիւնից, իր քառասուն քաջերի հետ ուղևորվեցաւ դէպի Սիւնեաց աշխարհը։

Երկրորդ գրքի վերջը.

---

*) Չարչուայ նշանակում է կողմնակալ։